Հարգելի գործընկեր,

Ուրախ ենք տեղեկացնել, որ սույն թվականի հունիսի 1-ից մեկնարկել է KfW-ի կողմից ֆինանսավորվող «Վերականգնվող էներգիայի զարգացում» վարկային ծրագրի 4-րդ և 5-րդ փուլերի շրջանակում մինչև 5ՄՎ հզորությամբ արևային կայանների նախագծերի դիմումների ներկայացման գործընթացը Ֆիխթներ միջազգային խորհրդատվական ընկերության տեխնիկական աջակցությամբ: Տեղեկացնում ենք նաև, որ Ֆիխթներ ընկերությունը ԳՀՀ ԾԿԳ-ի և KfW-ի հետ համատեղ քննարկել են ս.թ. մայիսի 25-ին տեղի ունեցած հանդիպում-քննարկման ընթացքում ներդրողների և ԳՖԿ-ների ներկայացուցիչների կողմից բարձրացված հարցադրումները և առաջարկել լուծումներ, որոնք, մեր կարծիքով, էապես կնպաստեն ծրագրի արդյունավետ իրականացմանը:

Ծրագրին ներկայացվող բոլոր պահանջները և անհրաժեշտ ամբողջ տեղեկավությունը, ինչպես նաև հանդիպում-քննարկման ընթացքում ներկայացված պրեզենտացիաները կարող եք գտնել Ծրագրի կայքէջում (www.re.gaf.am):

Հայտերը կարող են ներկայացվել առցանց՝ հետևյալ հղումով. http://re.gaf.am/index87f1.html?id=14:

Շնորհակալություն համագործակցության համար:

Հարգանքով՝

ԳՀՀ ԾԿԳ